# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N1688 - Ա** **27 մարտի 2009թ.**

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ Հ. 16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ՏԱՐԻԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՎԱՐՍԵՆԻԿ ՏԱՐԻԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՍԻԼՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՂՈՆԱԽՉՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արմեն Տարիելի Գրիգորյանի (ծնված 13.09.1972թ.), Վարսենիկ Տարիելի Գրիգորյանի (ծնված 27.11.1970թ.), Սիլվա Հարությունի Ղոնախչյանի (ծնված 04.06.1952թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Շրջանային փողոցի հ.16 հասցեում Արմեն Տարիելի Գրիգորյանին, Վարսենիկ Տարիելի Գրիգորյանին, Սիլվա Հարությունի Ղոնախչյանին պատկանող օրինական հողամասին կից օգտագործվում է 49.32քմ մակերեսով հողամաս, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1997 թվականը, 16.04.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 12.11.2008թ. հ.5910, Երևանի քաղաքապետարանի «Հողի ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20/2-Ե/101 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 26.02.2009թ. հ.20-Ել-1369 եզրակացությունը, համաձայն որի Շրջանային փողոցի հ.16 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Շրջանային փողոցի հ.16 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արմեն Տարիելի Գրիգորյանի, Վարսենիկ Տարիելի Գրիգորյանի, Սիլվա Հարությունի Ղոնախչյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական հողամասին կից 49.32քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 49.32քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

4. Շրջանային փողոցի հ.16 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Շրջանային փողոցի հ.16 տուն»:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արմեն Տարիելի Գրիգորյանի, Վարսենիկ Տարիելի Գրիգորյանի, Սիլվա Հարությունի Ղոնախչյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ